ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
BULLETIN OF THE AKADEMY OF SCIENCES OF THE ARMENIAH SSR

Բնական գիտություններ № 5—6, 1944 *Естественные науки*

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1944 թ. նոյեմբերի 23-ից մինչև 28-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր Ժողովը, ուր լսվեցին հետևյալ զեկուցումները.

1. Ներածական խոսք ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի։

2. Ֆիզիոլոգիական պրոցեսների զարգացման օրինաչափությունները Դարվինի ուսմունքի տեսակետից (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ե. Ս. Կոշտոյանց)։

3. Մի քանի հարցեր՝ կապված C վիտամինի նյութափոխանակության հետ (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հ. Ե. Բունիաթյան)։

4. Բույսերի ձևառաջացման օրինաչափությունները (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Մ. Գ. Թումանյան)։

5. Գրիգոր Մագիստրոսը որպես հայկական վաղ վերածննդի էպոխայի մեծագույն բժիշկ (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Լ. Ա. Հովհաննիսյան)։

6. ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Մանուկ Աբեղյանը որպես հայ գրականության պատմաբան (պրոֆեսոր Ե. Ս. Սարգսյան)։

7. Հայկական ՍՍՌ նոր տնտեսական քարտեզը (ավ. գիտ. աշխատող Ս. Ի. Խրիմյան)։

8. Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը (պրոֆեսոր Բ. Բ. Պիոտրովսկի)։

9. Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հիդրո-էլեկտրական լաբորատորիայի աշխատանքի հեռանկարները և հիդրավլիկական հետազոտությունների զարգացումը Սովետական Միությունում (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ի. Վ. Եղիազարյան)։

10. Հյուսիսային Հայաստանի մետաղալեռնիան (գեոլոգ. գիտութ. թեկնածու Ի. Գ. Մաղաքյան)։

11. Հեղուկ վառելանյութի ստացումը ածխաթթու գազի և էլեկտրոլիտիկ ջրածնի բաղայի վրա (ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Վ. Ի. Իսագուլյանց)։

12. Մագնիումի և ալյումինիումի պրոբլեմը Հայաստանում (քիմ. գիտութ. թեկնածու Մ. Վ. Դարբինյան, Մ. Գ. Մանվելյան և ավ. գիտ. աշխ. Գ. Պ. Բաղդասարյան)։

13. Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1945 թ. գիտա-

հետազոտական աշխատանքների պլանը (ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Գուլքանյան)։

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի ներածական խոսքը

Թանկագին ընկերներ։ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գիտությունների Ակադեմիայի Նախագահության հանձնարարությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի երկրորդ նստաշրջանը հայտարարում եմ բացված։

Այն օրից ի վեր, երբ Սովետական Կառավարության որոշմամբ բացվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան, անցել է ընդամենը մեկ տարի։ Սակայն ինչպիսի՜ վիթխարի փոփոխություններ կատարվեցին մեր երկրում այդ մեկ տարվա ընթացքում։ Հերոսական Կարմիր Բանակը գերմանական բարբարոսներին դուրս շպրտեց մեր սրբազան երկրի սահմաններից և ներկայումս հաղթական մարտեր է մղում թշնամու տերիտորիայում — Արևելյան Պրուսիայում և Հունգարիայի մայրաքաղաքի մատույցներում։

Կարմիր Բանակը, մեր դաշնակիցների բանակների հետ միասին, պատրաստվում է վերջին, կործանիչ հարվածը հասցնելու հիտլերյան Գերմանիային։

Հեռու չէ մեր վերջնական հաղթանակի տոնը, սովետական ժողովուրդների հաղթանակի տոնը։ Սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին ռազմաճակատում և թիկունքում հերոսաբար մարտնչում է հայ ժողովուրդը, որն այժմ նշում է իր ազատագրության 24-րդ տարեդարձը։

Հայ ժողովրդի ազատագրության այդ տարեդարձի հետ համընկնում է Հայկական Ակադեմիայի Ընդհանուր ժողովի ներկա նստաշրջանը, որը պետք է հանրագումարի բերի մեր գիտական կոլեկտիվի այս տարվա աշխատանքների արդյունքները։ Մեր Ակադեմիայի ինստիտուտներն ընթացիկ տարում զգալի աշխատանք են կատարել գիտության այն բոլոր բնագավառներում, որոնք ներկայացված են Ակադեմիայում. գեոլոգները գտել են նոր հանքային հարստություններ, քիմիկոսները Հայաստանի հումքերի հիման վրա կատարել են քիմիական միացությունների մի շարք արժեքավոր սինթեզներ, ֆիզիկոսներն ուսումնասիրել են կոսմիկական ճառագայթների հատկությունները և այդ բնագավառում արել են մի շարք հետաքրքրական դյուտեր. բիոլոգներն աշխատել են Հայաստանի բույսերի ու կենդանիների ուսումնասիրությամբ, բուսաբաններն զբաղվել են գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու հարցերով։

Առանձնապես պետք է նշել այն աշխատանքները, որ կատարել է մեր Ակադեմիայի Հասարակական գիտությունների Բաժանմունքը։ Այս բաժանմունքի գծով հրատարակվել են հայ ժողովրդի պատմության և հայոց գրականության պատմության վերաբերյալ մի շարք արժեքավոր գործեր, հրատարակվել են լեզվաբանական կարևոր աշխատանքներ, բառարաններ և այլն։ Բացի նեղ գիտական աշխատանքից՝ Ակադեմիան կատարել է նաև գիտա-լուսավորական ծավալուն աշխատանք. կազմակերպված են բազմա-

թիվ դասախոսություններ լայն հասարակայնության համար, հրատարակված է գիտա-լուսավորական գրականություն։

Թեպետ մենք ունենք որոշ հաջողություններ, բայց կարելի է ասել, որ մեր Ակադեմիան դեռ նոր է միայն սկսել իրեն հանձնարարված գործը. դեռ կան այնպիսի մասնագիտություններ, որոնք միայն նոր պիտի մշակվեն մեզ մոտ և որոնց բնագավառում նույնիսկ աշխատանքն սկսված չէ։ Առաջիկա տարում մենք պետք է լարենք մեր բոլոր ուժերն ու հնարավորությունները պարտիայի և կառավարության առաջադրանքները կատարելու համար, պետք է ավելի լավ օգնենք մեր մեծ հայրենիքին թշնամու դեմ վերջնական հաղթանակ տանելու և նոր տնտեսական ու կուլտուրական վերելքն ապահովելու գործում։

Պարտիան և կառավարությունը բարձր են գնահատել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գիտական կոլեկտիվի աշխատանքը, որն ուղղված է հօգուտ մեր հայրենիքի շահերի։ Բավական է ասել, որ այս տարվա ընթացքում Ակադեմիայի 22 իսկական անդամներից 10 հոգի պարգևատրվել են Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով։ «Լենինի շքանշանով» և «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով պարգևատրված է մեր Ակադեմիայի պրեզիդենտ, իսկական անդամ Հովսեփ Օրբելին։ «Լենինի շքանշանով» պարգևատրվել են նաև իսկական անդամներ Լևոն Օրբելին և Ալեքսանդր Հակոբյանը։ «Կարմիր Դրոշի» շքանշանով պարգևատրված են իսկական անդամներ Սահակ Կարապետյանը, Հրաչյա Բունիաթյանը, Խաչատուր Կոշտոյանցը, Միքայել Թումանյանը և Կոնստանտին Պաֆֆենգոլցը։ Մեր Ակադեմիայի իսկական անդամ Լևոն Հովհաննիսյանն ընտրվել է Համամիութենական Բժշկական Գիտությունների Ակադեմիայի անդամ։

Այդ բարձր գնահատականները ցույց են տալիս, թե ինչպիսի ուշադիր և հոգատար վերաբերմունք ունի մեր սովետական կառավարությունը դեպի գիտությունը։

Մենք ապրում ենք մի երկրում, որտեղ ամբողջ հասարակակարգը կառուցված է գիտական հիմքերի վրա։ Սովետական Միության ժողովուրդները մեծ ինամքով են վերաբերվում գիտությանը։ Գիտությունը թափանցել է մեր կյանքի բոլոր բնագավառները, մեր երկրի ամենահեռավոր անկյունները։ Պատմության մեջ չի եղել այնպիսի մի ժամանակ և այնպիսի մի երկիր, երբ և որտեղ գիտությունն այնքան մեծ դեր խաղար, որքան խաղում է Սովետական Միության մեջ։

Այդ բոլորը մեզ պարտավորեցնում է ցույց տալ գիտական աշխատանքի նոր, բարձր օրինակներ, առաջավոր գիտական-ստեղծագործական միտքը հասցնել աննախընթաց բարձրության։

*
* *

Նոյեմբերի 28-ին, իր եզրափակիչ նիստում, Ընդհանուր ժողովը լսեց ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Գուլքանյանի զեկուցումը Ակադեմիայի 1944 թ. գիտա-հետազոտական աշխատանքների կատարման և 1945 թ. պլանի մասին։ Զեկուցողը մանրամասն կանգ առավ այն պրոբլեմների վրա, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել են Ակադեմիայի հիմնարկներում 1944 թ. ընթացքում, ինչպես և

այն պրոբլեմների, որոնցով հիմնարկներն զբաղվելու են 1945 թվականին։

Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Գուլքանյանի զեկուցման շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին՝ Ակադեմիայի իսկական անդամներ Գ. Ղափանցյանը, Մ. Թումանյանը, Ա. Հակոբյանը, Ս. Կարապետյանը, ինչպես նաև ինստիտուտների դիրեկտորները և առանձին գիտ. աշխատողներ։

Ընդհանուր Ժողովը ընդունեց հետևյալ որոշումը.

Լսելով Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Գուլքանյանի զեկուցումը Ակադեմիայի 1944 թ. աշխատանքների կատարողականի և 1945 թ. աշխատանքների պլանի մասին, Ակադեմիայի Ընդհանուր Ժողովը հիմնականում հավանություն է տալիս ներկայացրած պլանին և առաջարկում է Ակադեմիայի Նախագահությանը՝ տեղի ունեցած մտքերի փոխանակության հիման վրա պլանի մեջ մտցնել անհրաժեշտ լրացումներն ու փոփոխությունները։ Ընդհանուր Ժողովը առաջարկում է Ակադեմիայի Նախագահությանը՝ իր գործնական աշխատանքների ընթացքում առավել չափով ուշադրություն դարձնել առաջավոր գիտության և Ռեսպուբլիկայի տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցող պրոբլեմների վրա, ինստիտուտների գլխավոր ուժերը կենտրոնացնելով այդ պրոբլեմների շուրջը։

Ընդհանուր Ժողովի կողմից բուռն և երկարատև օվացիայով է ընդունվում ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինին ողջույնի հեռագիր ուղարկելու առաջարկությունը։

Ակադեմիայի իսկական անդամ Լ. Հովհաննիսյանը կարդում է ողջույն-հեռագրի տեքստը, և դահլիճում օվացիայի նոր ալիք է բարձրանում, երբ նա արտասանում է ողջույնի եզրափակիչ բառերը՝ «Կեցցե՛ մեր բարեկամ և սիրելի առաջնորդ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը»։

Բուռն ծափահարություններով է ընդունվում ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկեր Գ. Հարությունյանին ողջույնի հեռագիր ուղարկելու առաջարկությունը։ Ողջույն-հեռագրի տեքստը կարդում է Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանը։

* * *

Նոյեմբերի 23-ին, Ընդհանուր Ժողովի սեսիայի կապակցությամբ, բացվեց ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ինստիտուտների և բաժանմունքների աշխատանքների ցուցահանդեսը։ Հասարակական գիտությունների բաժանմունքում ցուցադրվեցին վերջին շրջանում Ակադեմիայի հրատարակած գործերը, մասնավորապես Ակադեմիայի իսկական անդամ հանգուցյալ Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» խորագիրը կրող կապիտալ աշխատության առաջին հատորը, «Հայ ժողովրդի պատմության» ձեռնարկի առաջին մասը, Պատմության Ինստիտուտին կից Հայրենական պատերազմի պատմության կաբինետի ժողոված նյութերը և այլն։

Ֆիզիկո-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների Բաժանմունքի հատվածում ցուցադրվեցին Փոքր Կովկասի մետալոգեն քարտեզը, Հայաստանի տուֆերի հետազոտության, Հայաստանի և մասնավորապես Երևան քաղաքի երկրաշարժների ուսումնասիրության վերաբերյալ

նյութերը, գոլոմբտից մաքնիում ստանալու սխեման, հիդրո-էլեկտրական լաբորատորիայի նախագիծը, Ջրա-էներգետիկ ինստիտուտի և Աստղադիտարանի աշխատանքները։

Բիոլոգիական գիտությունների Բաժանմունքի հատվածում ցուցադրվեցին Բույսերի գենետիկայի ինստիտուտի աշխատանքների վերին աստիճանի արժեքավոր արդյունքները։ Այստեղ ցուցադրվեցին բամբակենու խոր ծերատման (որով զգալիորեն բարձրանում է բամբակենու բերքը և արագանում է նրա հասունացումը), ծխախոտի լրացուցիչ բերք և ցորենի արժեքավոր ձևեր ստանալու վերաբերյալ աշխատանքները, որ կատարել է Ակադեմիայի իսկական անդամ Վ. Գուլքանյանը։ Ցուցադրվեցին տոմատի, կարտոֆիլի և այլ կուլտուրաների վեգետատիվ հիբրիդիզացիային վերաբերող նյութեր, այլև տեղական պտղատու կուլտուրաների (դեղձ, նուշ, սերկևիլ, սալոր, կեռաս և այլն) արժեքավոր տեսակներ։ Բուսաբանական ինստիտուտը ցուցադրեց Հայաստանի ֆլորայի նոր տեսակներ, իսկ Բուսաբանական այգին ծաղկաբույսերի և դեղաբույսերի գծով, ինչպես և Երևանի ցրտադիմացկուն արժեքավոր բույսերի հայտածման գծով կատարած աշխատանքները։ Հետաքրքրական էին նաև կենդանաբանական ինստիտուտի, Սևանի Հիդրո-բիոլոգիական կայանի և Միկրոբիոլոգիայի սեկտորի ցուցադրած աշխատանքները։ Ֆիզիոլոգիայի ինստիտուտը ցուցադրեց Ակադեմիայի իսկական անդամ Հ. Բունիաթյանի այն աշխատանքները, որ նա կատարել է C վիտամինի գծով։ Հետաքրքրական նյութեր ցուցադրեց հայ բժշկության պատմությունն ուսումնասիրող հանձնաժողովը։

Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի հատվածում ցուցադրվեցին կուլտուրական բույսերի ձևակազմավորման բնագավառում Ակադեմիայի իսկական անդամ Մ. Թումանյանի կատարած, տեսական և գործնական մեծ նշանակություն ունեցող աշխատանքների արդյունքները։ Այդ աշխատանքները հնարավորություն են տալիս Արարատյան հարթավայրի պայմաններում ստանալ տարեկան երկու բերք (եգիպտացորենի, արախիսի և քունջութի) և այդ նույն կուլտուրաները մշակել նաև լեռնային շրջաններում։ Երկրագործության ինստիտուտի նյութերի շարքում ցուցադրվեցին նաև ընդեղենների ու կարծր մարմինների ծավալը որոշելու մի նոր գործիք և յուղատու բույսերի սերմերի յուղի պարունակությունը որոշելու մի նոր մեթոդ, որոնց հեղինակն է գյուղատնտ. գիտ. թեկն. Ե. Մովսիսյանը։

Անասնապահության ինստիտուտի բաժնում ցուցադրվեցին Հայաստանի բուսականության քարտեզը, մարգագետինների և արոտավայրերի բարելավման գործում ձեռք բերած հաջողությունները, ինստիտուտի էքսպերիմենտալ բազայում աճեցրած ճագարների բարձրորակ մորթիներ, սովետական մարդեր և անասնաբուծության բնագավառում կատարած գիտական աշխատանքի արդյունքները։ Գինեգործության և խաղողաբուծության ինստիտուտը ցուցադրեց գինու, խաղողի տեղական սորտերը և այլն։ Էկոնոմիկայի սեկտորը ցուցադրեց Հայաստանի հետաքրքրական և բովանդակալից տնտեսական քարտեզը։